Պարույր Սևակ

Ձեռքեր

Դուք՝ քրտնաթոր, տանջված ձեռքեր,
Արեգակից խանձված ձեռքեր,
Ձեռքեր՝ բքից, շոգից ճաքած,
Դո՛ւք, որ հողից քամում բերքեր,
Ցավն եք անգամ դարձնում երգեր՝
Վհատության դուռը փակած:
Դո՛ւք, որ հանքից քար եք հանում,
Որ ծակծըկվում՝ կար եք անում,
Տապակվում եք՝ հալում մետաղ,
Եվ, հոգնատանջ, դառնալով տուն,
Մեկով թոռին, մեկով որդուն
Պինդ գրկելով՝ ասում «մատա՛ղ»:
Դո՛ւք, որ երեկ բռնել եք զենք,
Դո՛ւք, որ այսօր շինում եք շենք,
Կամուրջ գցում, կապում կամար.
Որ քիչ վերցնում, շատ եք դնում,
Շատ եք տալիս, քիչ ստանում՝
Հասկանալով ինչի համար:
Դո՛ւք, որ մթնում լույս եք փռում,
Որ խրախույս, հույս եք փռում,
Ձեռքե՛ր, ձեռքե՛ր ժողովրդի,

Դուք՝ ստեղծո՛ղ, ճարտա՛ր ձեռքեր,
Դուք՝ չկեղծո՛ղ, արդա՛ր ձեռքեր,
Ձեզ է երգում ձեր խորթ որդին՝
Ակնածանքո՛վ՝ ձեռքը սրտին,
Մեծարանքո՛վ՝ երգը շրթին...

30.X.1955թ.
Մոսկվա